իրենց գիտութեան պաշարը հերիք չի արել, նրանք և թշնամուց են ուսել և նոյն զէնքերով կռուել ու յաղթել թշնամուն։

,, Այնպիսի օրերում, երբ մարդու կեանքը մի որսի կենդանու գին ունէր. վանքերում կրթութիւն և գիտութիւն է մշակուել և պահպանուել։

,, Նոր քաղաքակրթութեան նշոյլներն անգամ, առաջ վանքերումն են լոյս տուել։

,, Ամեն մի դաւառ ունեցել է իւր լուսատու փարոսը, ամեն մի կեդրոն իւր վանքը, որի միաբանները ժողովրդի ուսուցիչն են եղել։

,, Մեր մէջ չեն եղել այն կազմակերպութիւնով վանքեր, որոնցով հարուստ է կաթոլիկ եկեղեցին։ Հայ վանքերը միշտ ժողովրդին են ծառայել և ոչ երբէք հերարխիային կամ որոշ կուսակցութեան։

,, Հայ վանքերը երբէք պորտաբոյծների բնակարան չեն եղել, այլ աղնիւ և անխոնջ մշակների։ [1])

,, Պէտք չէ՞ աեղեակ լինել մեր ազգի ամբողջ պատմութեանը. հասկանալու համար Հայ վանականութեան նշանակութիւնը. հերիք է եթէ ամէն մէկս հետաքրքրուի իւր հայրենի գիւղի և քաղաքի վանքերի անցեալով, որոնց պատմութիւնը մեզ ցոյց կտայ վանքերի մատուցած անհուն ծառայութիւնը։

,, Վերջ ի վերջոյ՝ հաշիւը կը պարզէ մեզ, թէ լուսաւորութեան գործի համար ինչքան մեծ ծառայութիւն են արել Հայ վանքերն անցեալներում։

,, Վերջին դարերում չէն վանքերն եթէ հաշուենք. նրանց թիւն առ նուազն 300ի կը հասնին որոնց աւերակները դեռ եւս կանգուն են և յիշատակները թարմ. այդ 300 վանքերը միեւնոյն ժամանակ երեք հարիւր դպրոցներ էին Հայոց ազգի համար։

,, Այդ դեռ եւս այնքան շօշափելի չէ թերեւս, մի այլ փաստ յառաջ բերենք։

---

[1]) Շատ իրաւ։ Ամեն պատմարանք վկայ են։

[2]) Մինչեւ 500 վանքեր կային 1500 թուին՝ Միքայէլ Կաթողիկոսի յիշատակարանին համաձայն։